ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԸ ՀՅՈՒՐԸՆԿԱԼԵԼ Է «ԵՎՐԱՍԻԱ» ԱՎԱԳ ԴՊՐՈՑԻ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻՆ

16.02.2022 17:44

ՀՀ փաստաբանների պալատը հյուրընկալել է Եվրասիա միջազգային համալսարանի «Եվրասիա» ավագ դպրոցի հումանիտար հոսքի «Իրավագիտություն» և «Դիվանագիտություն» ենթահոսքերի աշակերտներին:

Ողջունելով աշակերտներին՝ փաստաբանների պալատի նախագահի տեղակալ Հարութ Ակլունցը մանրամասն ներկայացրեց փաստաբանի դերն արդարադատության համակարգում, փաստաբանի գործառույթները, փաստաբան դառնալու ընթացակարգը և անհրաժեշտ պայմանները: Բացի այդ, աշակերտներն իրազեկվեցին փաստաբանների պալատի, հանրային պաշտպանի գրասենյակի և փաստաբանական դպրոցի գործառույթների ու կառուցվածքի վերաբերյալ:

Աշակերտները նաև շրջայց ունեցան փաստաբանների պալատի վարչական շենքում, փաստաբանական դպրոցում և հանրային պաշտպանի գրասենյակում՝ ծանոթանալով աշխատանքային գործընթացին:

BACK $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })